

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**

14 հուլիսի 2004 թվականի N 609-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 18 (166), 16.08.04)  
2 փետրվարի 2005 թվականի N 77-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 4 (181), 15.02.05)  
26 հունիսի 2006 թվականի N 549-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 18 (227), 17.07.06)  
22 նոյեմբերի 2007 թվականի N 1121-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 33 (273), 17.12.07)  
15 հունվարի 2009 թվականի N 30-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 6 (324) 16.02.09)  
12 հոկտեմբերի 2010 թվականի N 817-Ն (ՀՀ ԳՆԱՍ N 25 (377), 01.11.2010)

31 մայիսի 2004 թվականի N 436-Ն  
քաղ. Երևան

**ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը (հավելված):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2003 թվականի հունիսի 17-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքման կարգը սահմանելու մասին» N 214-Ն որոշումը, բացառությամբ այդ որոշման 2-րդ կետի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

## Կ Ա Ր Գ

### Ժ Ա Մ Կ Ե Տ Ա Յ Ի Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Կ Ն Ք Ե Լ ՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Քաղաքացիական ծառայության պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր հետևյալ դեպքերում.

ա) հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի.

բ) պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու.

գ) մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով սահմանված կարգով քաղաքացիական ծառայողի գործուղման.

դ) մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելու.

ե) քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության.

զ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը սույն կարգով նախատեսված դեպքերում կարող է զբաղեցվել՝

ա) տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի.

բ) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում (այսուհետ՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվ) գրանցված քաղաքացիական ծառայողի, *իսկ կրտսեր պաշտոնների դեպքում՝ նաև հավաստագիր ունեցող անձի.*

գ) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում (այսուհետ՝ կադրերի երկարաժամկետ ռեզերվ) գրանցված անձի.

դ) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի կողմից:

Սույն կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով նախատեսված քաղաքացիական ծառայողը և անձը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնում է իր համաձայնությամբ:

4. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կարող է զբաղեցվել սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված, ինչպես նաև վեց ամիսը չգերազանցող ժամկետով օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ մինչև վեց ամիս ժամկետով տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հայեցողությամբ՝ նրա հրամանով (որոշմամբ):

Եթե տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված է տվյալ պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողի փոխարինումը մեկից ավելի քաղաքացիական ծառայողների կողմից, ապա նրանց փոխարինման ժամկետների հանրագումարը չպետք է գերազանցի վեց ամիսը:

Սույն կետով նախատեսված հրամանի (որոշման) պատճենը համապատասխան մարմինը եռօրյա ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

5. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի, *իսկ կրտսեր պաշտոնների դեպքում՝ նաև հավաստագիր ունեցող անձի*, իսկ դրա անհնարինության դեպքում՝ կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձի, իսկ դրա անհնարինության դեպքում մեկ այլ անձի կողմից կարող է զբաղեցվել՝

ա) սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված, ինչպես նաև վեց ամիսը չգերազանցող ժամկետով օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հայեցողությամբ՝ նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքելով (Ձևը կցվում է):

բ) սույն կարգի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն կարգի 2-րդ կետի «գ» ենթակետով և օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից նրա հետ Պայմանագիր կնքելով:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված դեպքերում (ընդ որում, սույն կարգի 5-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքերում՝ եռօրյա ժամկետում) տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը գրավոր դիմում է Խորհուրդ՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող սույն կարգով նախապատվություն ստացած կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի կամ կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ Պայմանագիր կնքելու համար:

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված գրավոր դիմումը կամ 16-րդ կետով նախատեսված գրավոր տեղեկությունը ստանալուց հետո Խորհուրդն առնվազն տասնօրյա ժամկետում հրապարակում է հայտարարություն՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված *քաղաքացիական ծառայողների, իսկ կրտսեր պաշտոնների դեպքում՝ նաև հավաստագիր ունեցող անձանց, ինչպես նաև* կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձանց կողմից քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմում ներկայացնելու նպատակով:

8. Հայտարարության մեջ պետք է պարունակվեն առնվազն հետևյալ տվյալները.

ա) համապատասխան մարմնի անվանումը.

բ) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը և տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

գ) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները.

դ) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը կամ դրա վերացման ժամկետը.

ե) դիմումների ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի տվյալ հայտարարության առաջին հրապարակման երրորդ աշխատանքային օրը.

զ) Խորհրդի աշխատակազմի գտնվելու վայրը և համապատասխան հեռախոսահամարը:

9. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված հայտարարության հիման վրա ներկայացված դիմումներից նախապատվությունը տրվում է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողին:

Եթե դիմում են ներկայացրել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված մեկից ավելի քաղաքացիական ծառայողներ, ապա նախապատվության իրավունքը տրվում է տվյալ համապատասխան մարմնի հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված և կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքա-

ցիական ծառայողին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին:

*10. Եթե տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի (քաղաքացիական ծառայողների) կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողը (քաղաքացիական ծառայողները) չի բավարարում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները, ապա կրտսեր պաշտոնների համար հիմք է ընդունվում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող քաղաքացիների ցանկում ընդգրկված անձի դիմումը:*

*Եթե կրտսեր պաշտոնների համար դիմում են ներկայացրել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող քաղաքացիների ցանկում ընդգրկված մեկից ավելի անձինք, ապա նախապատվության իրավունքը տրվում է ցանկում առավել երկար ժամկետով գտնվող անձին, այս պայմանի հավասարության դեպքում՝ թեստավորման արդյունքում ավելի բարձր տոկոսներ հավաքած անձին, այս պայմանի հավասարության դեպքում՝ առավել երկար քաղաքացիական ծառայության ստաժ ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ ավելի բարձր դասային աստիճան ունեցող անձին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող անձին:*

*Եթե տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող քաղաքացիների ցանկում ընդգրկված անձի կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող քաղաքացիների ցանկում ընդգրկված անձը (անձինք) չի բավարարում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները, ապա հիմք է ընդունվում կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձի (անձանց) դիմումը:*

*Եթե դիմում են ներկայացրել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված մեկից ավելի անձինք, ապա նախապատվության իրավունքը տրվում է կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալու հիմքով կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հարցազրույցի փուլում առնվազն յոթանասունհինգ տոկոս ստացած և պաշտոնի չնշանակվելու հիմքով կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել երկար քաղաքացիական ծառայության ստաժ ունեցող անձին, այս պայմանի*

հավասարության կամ բացակայության դեպքում՝ կադրերի երկարաժամկետ ռեզերվում առավել երկար ժամկետով գտնվող անձին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող անձին:

11. Սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձի մասին Խորհուրդը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին տեղեկացնում է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին համապատասխան տեղեկություն հրապարակելով Խորհրդի աշխատակազմում տեսանելի ցուցանակի վրա, *ինչպես նաև Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում:*

Սույն կետով նախատեսված տեղեկացումը ստանալու մասին հրապարակվում է տեղեկություն համապատասխան մարմնի տեսանելի ցուցանակի վրա:

12. Խորհուրդը սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված համապատասխան անձին սույն կարգով սահմանված ընթացակարգով նախապատվություն տալու դեպքում այդ մասին հայտնում է նրան սույն կարգի 11-րդ կետում նշված տեղեկացման օրը:

13. Եթե տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձի (անձանց) կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված անձը (անձինք) չի բավարարում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները, ապա Խորհուրդը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին:

14. Սույն կարգի 13-րդ կետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, կարող է մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի հետ կնքել Պայմանագիր՝ հաշվի առնելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ, 12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր տվյալ պաշտոնն առաջացել է նրա այդ

պաշտոնից Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ», «գ.2», «դ», «ե», «թ», «ժ» և «ի» կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ազատվելու հետևանքով:

15. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը սույն կարգի 11-րդ կետով նախատեսված տեղեկությունները ստանալուց հետո եռօրյա ժամկետում, իսկ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերում՝ մեկամսյա ժամկետում, Պայմանագիրը կնքում է երեք հավասարազոր օրինակից, որի առաջին օրինակը պահվում է համապատասխան մարմնում, երկրորդը՝ եռօրյա ժամկետում ներկայացվում է Խորհուրդ, իսկ երրորդը՝ նույն օրը տրվում է այն անձին, ում հետ կնքվել է Պայմանագիրը:

16. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի հետ Պայմանագիր չկնքելու, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձի համապատասխան մարմին չներկայանալու կամ համապատասխան մարմին սահմանված ժամկետում ներկայանալուց հետո քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը Պայմանագրով զբաղեցնելուց հրաժարվելու դեպքերում համապատասխան մարմինը եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է Խորհրդին:

Համապատասխան մարմին չներկայացած կամ ժամանակավոր թափուր պաշտոնը Պայմանագրով զբաղեցնելուց հրաժարված անձինք սույն կետով նախատեսված տեղեկությունը Խորհուրդ ներկայացվելուց հետո երեք ամիս ժամկետով չեն օգտվում սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված նախապատվության իրավունքից:

Սույն կետով նախատեսված դեպքերում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցվում է ընդհանուր հիմունքներով:

17. Պայմանագրի ժամկետը, մինչև սույն կարգի 18-րդ կետով նախատեսված հիմքերից մեկի առաջացումը, կարող է երկարաձգվել քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի կամ դրա վերացման ժամկետի փոփոխման դեպքում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի և այն անձի համաձայնությամբ, ում հետ կնքվել է Պայմանագիրը:

18. Պայմանագիրը լուծվում է՝

ա) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման, այդ թվում՝ վաղաժամկետ, դեպքում.

բ) Օրենքի 33-րդ հոդվածով (բացառությամբ այդ հոդվածի 1-ին մասի «դ», «ե», «է», «թ», «ժդ», «ի», «իա» կետերով և 3-րդ մասով) նախատեսված դեպքերում.

գ) սույն կարգի խախտմամբ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու դեպքում.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով Պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքի չներկայանալու դեպքում, ընդ որում՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն մեկ ամսից ավելի ժամկետով զբաղեցնելու դեպքում Պայմանագրում ժամկետը սահմանվում է ոչ պակաս, քան յոթ աշխատանքային օր, իսկ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն մինչև մեկ ամիս ժամկետով զբաղեցնելու դեպքում՝ ոչ պակաս, քան երեք աշխատանքային օր:

Սույն կետի «դ» ենթակետով նախատեսված ժամկետները կարող են երկարաձգվել քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հայեցողությամբ:

Սույն կարգի խախտմամբ կնքված Պայմանագիրը ենթակա չէ լուծման տվյալ պաշտոնը Պայմանագրով զբաղեցնող անձի անձնական դիմումի համաձայն:

19. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում սույն կարգի 3-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով նախատեսված անձինք չեն կարող Օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով գործուղվել:

20. Չի թույլատրվում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել այնպիսի փոփոխություն, որը կարող է հանգեցնել տվյալ պաշտոնը Պայմանագրով զբաղեցնող անձի հետ կնքված Պայմանագրի լուծմանը:

-----



**Ժ Ա Մ Կ Ե Տ Ա Յ Ի Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ N-----**

ք.-----

«-----» -----200--ք.

Հայաստանի Հանրապետության -----, մի  
(համապատասխան մարմնի անվանումը)

կողմից, ի դեմս -----  
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

(այսուհետ՝ Համապատասխան մարմին) և

(քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձի  
անունը, ազգանունը, հայրանունը )

(ծնված 19----ք.----- «-----»-ին, բնակության վայրը՝-----  
-----

անձնագիր N----- տրված ----- կողմից -----ք. ----- «-----»-ին ) մյուս  
կողմից (այսուհետ՝ Պաշտոնակատար) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**I. Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ Ա Ռ Ա Բ Կ Ա Ն**

1. Համապատասխան մարմինը հանձնարարում է, իսկ Պաշտոնակատարն ապահովում է ---

----- -ում  
(համապատասխան մարմնի անվանումը)

(քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը)

պաշտոնի անձնագրով սահմանված պահանջների ճշգրիտ և ժամանակին կատարումը:

**II. Կ Ո Ղ Մ Ե Ի Ի Բ Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ի Ն ՈՒ Պ Ա Բ Տ Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ի Ը**

2. Կողմերն ունեն «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետու-  
թյան օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ և պարտականություններ:

### III. ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Համապատասխան մարմինը Պաշտոնակատարին վճարում է ամենամսյա աշխատավարձ

----- դրամի

(տասերով և թվերով)

չափով:

### IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

5. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են քաղաքացիական ծառայության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

6. Սույն պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված կարգով:

7. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Սույն պայմանագիրը գործում է ստորագրման պահից:

9. Սույն պայմանագիրը կնքվել է երեք հավասարազոր օրինակից:

Համապատասխան մարմին

Պաշտոնակատար

-----  
(ստորագրություն)

-----  
(ստորագրություն)

Կ.Տ.